# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 62

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ 525.0 ՔՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ 58.9 ՔՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Նարինե Լյուդվիգի Բարսեղյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգետարածք 17-րդ թաղամաս թիվ 3 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (կոդ 07-054-0118-0017) 1989 թվականին ինքնակամ կառուցված այգետնակը, ջրավազանը, պարիսպը, 2002 թվականին ինքնակամ կառուցված զուգարանը, երկու ծածկը և սեփականության իրավունքով իրեն պատկանող 525.0 քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին կից ինքնակամ զբաղեցրած 58.9 քմ հողամասի նկատմամբ ճանաչել սեփականության իրավունքը: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Նարինե Լյուդվիգի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգետարածք 17-րդ թաղամաս թիվ 3 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 1989 թվականին ինքնակամ կառուցվել է 122.5 քմ մակերեսով այգետնակ, 26.4 քմ մակերեսով ջրավազան, 9.6 քմ մակերեսով պարիսպ, 2002 թվականին ինքնակամ կառուցվել է 21.15 քմ մակերեսով զուգարան և երկու ծածկ և սեփականության իրավունքով իրեն պատկանող 525.0 քմ հողամասին կից ինքնակամ զբաղեցվել է 58.9 քմ մակերեսով հողամաս:

Համաձայն հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11; 13; 22.1 կետերի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նարինե Լյուդվիգի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-2 այգետարածք 17-րդ թաղամաս թիվ 3 հասցեի բնակավայրերի նշանակության հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և

օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, 58.9 քմ տարածքը ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Նարինե Լյուդվիգի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող 1989 թվականին կառուցված 122.5 քմ մակերեսով այգետնակը, 26.4 քմ մակերեսով ջրավազանը և 9.6 քմ մակերեսով պարիսպը համարել օրինական:
2. Հաշվի առնելով, որ այգետնակը, ջրավազանը և պարիսպը կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում:
3. Քաղաքացի Նարինե Լյուդվիգի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող 2002 թվականին կառուցված 21.15 քմ մակերեսով զուգարանը և երկու ծածկը համարել օրինական:
4. Պարտավորեցնել քաղաքացի Նարինե Լյուդվիգի Բարսեղյանին 2002 թվականին կառուցված 21.15 քմ մակերեսով զուգարանի և երկու ծածկի համար համայնքային բյուջե 900105225214 հաշվեհամարին վճարել 32994 (երեսուն երկու հազար ինն հարյուր իննսուն չորս) ՀՀ դրամ:
5. Քաղաքացի Նարինե Լյուդվիգի Բարսեղյանին սեփականության իրավունքով պատկանող 525.0 քմ հողամասին կից ավել օգտագործվող 58.9 քմ, մակերեսով ինքնակամ զբաղեցրած հողամասի նկատմամբ՝ համաձայն Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների, ճանաչել նրա սեփականության իրավունքը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2018 թ. սեպտեմբերի 12
գ.Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 63

## ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 06-Ի N 32 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերի պահանջների, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2016 թվականի նոյեմբերի 01-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 20-ի N 203-Ա հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 154-Ա հրամանը և Կոտայքի մարզպետի 2018 թվականի օգոստոսի 01-ի N 01/15.1/3807-18 գրությունը՝ ***որոշում եմ.***

1. Պտղնի համայնքի ղեկավարի 2016 թվականի հունիսի 06-ի «Պտղնիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 32 որոշմամբ հաստատված N 1 հավելվածի «Գիտելիքներ և հմտություններ» բաժնում «Իրավական ակտերի մասին» բառերը փոխարինել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» բառերով:
2. ՈՒԺը կորցրած ճանաչել Պտղնի համայնքի ղեկավարի 2016 թվականի հունիսի 06-ի «Պտղնիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 32 որոշմամբ հաստատված N 4 հավելվածը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2018 թ. սեպտեմբերի 12
գ.Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 64

## ՍԱԹԵՆԻԿ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՀՈՂԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջների՝ ***որոշում եմ.***

1. Թույլատրել Սաթենիկ Զորիկի Գալստյանին իրեն սեփականության իրավունքով պատկանող 1.53 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի (սեփականության վկայական N 03072018-07-0046, ծածկագիր 07-054-0327-0016) վրա կատարել հողային, մասնավորապես հողահարթեցման և քարահավաքման աշխատանքներ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2018 թ. սեպտեմբերի 13
գ.Պտղնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 65

## ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջների, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածի պահանջների, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի, հիմք ընդունելով Պտղնի համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 12-ի N 15-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1. 2018 թվականի հոկտեմբերի 02-ին Պտղնիի համայնքապետարանի շենքում կազմակերպել հանրային քննարկում՝ Պտղնի համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի բնապահպանական փորձաքննության երկրորդ փուլի վերաբերյալ:
2. Հաստատել Պտղնի համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի բնապահպանական փորձաքննության երկրորդ փուլի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկման հրավերը՝ համաձայն հավելվածի:
3. Պտղնիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Մարատ Տարիելի Պետրոսյանին՝
1) Հայաստանի հանրապետություն օրաթերթում և համայնքապետարանի պաշտոնական կայքում տեղադրել Պտղնի համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի բնապահպանական փորձաքննության երկրորդ փուլի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկման հրավերը, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում և այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2018 թ. սեպտեմբերի 13
գ.Պտղնի

Հավելված
Կոտայքի մարզի Պտղնի
համայնքի ղեկավարի 2018 թվականի
սեպտեմբերի 13-ի N 65 որոշման

# ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀՐԱՎԵՐ

Համաձայն Պտղնի համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 12-ի «Պտղնի համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» N 15-Ն որոշմամբ հաստատված հավելվածի, 2018 թվականի հոկտեմբերի 02-ին ժամը՝ $14^{00}$-ից մինչև $15^{00}$-ն Պտղնիի համայնքապետարանի շենքում կկայանա հանրային բաց լսումներ (քննարկում)՝ Պտղնի համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի բնապահպանական փորձաքննության երկրորդ փուլի վերաբերյալ: Հանրային լսումներին կարող են մասնակցել բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձինք:
Հանրային լսումների ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձինք Պտղնի համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի բնապահպանական փորձաքննության երկրորդ փուլի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց առաջարկություններն ու առարկությունները, որոնք կարող են ուղարկել ptghni.kotayq@mta.gov.am կամ ptghnihamaynq@mail.ru էլեկտրոնային հասցեներով, ինչպես նաև կարող են գրավոր ներկայացնել համայնքապետարանի աշխատակազմ:

Համայնքապետարանի աշխատակազմը ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում, հետադարձ կապի միջոցով տեղեկացնում է համապատասխան առաջարկությունները և առարկությունները ստանալու մասին:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 66

## ԼՅՈՒԴՎԻԳ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ ՊԱՏՈՒՀԱՆԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Լյուդվիգ Տիգրանի Խաչատրյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-1 այգետարածք 12-րդ թաղամաս թիվ 18 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (սեփականության վկայական N 1077314, ծածկագիր 07-054-0136-0037) 2005 թվականին ինքնակամ կառուցված շինությունները և ինքնակամ բացված պատուհանը: Համայնքի էլեկտրոնային քարտեզից, որակավորված անձի կողմից գծված հողամասի և շինությունների հատակագծերից և տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Լյուդվիգ Տիգրանի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-1 այգետարածք 12-րդ թաղամաս թիվ 18 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 2005 թվականին ինքնակամ կառուցվել է 81.0 քմ մակերեսով այգետնակ և 2.79 քմ մակերեսով պարիսպ, ինչպես նաև առկա է ինքնակամ բացված մեկ պատուհան:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8.1; 9; 10; 11; 13 և 18-րդ կետի «դ» ենթակետի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված հողամասի և շինությունների հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ինքնակամ բացված պատուհանի և ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. Լյուդվիգ Տիգրանի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-1 այգետարածք 12-րդ թաղամաս թիվ 18 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության հողամասում՝ ԱՁ Սամվել Առաքելի Ավետիսյանի կողմից 03.09.2018 թվականին տրված հատակագծերի համաձայն (կցվում են) ինքնակամ կառուցված 81.0 քմ մակերեսով այգետնակը և 2.79 քմ մակերեսով պարիսպը, ինքնակամ բացված պատուհանը համարել օրինական:

2. Պարտավորեցնել Լյուդվիգ Տիգրանի Խաչատրյանին ինքնակամ կառուցված շինությունների և ինքնակամ բացված պատուհանի օրինականացման համար համայնքային բյուջե 900105225214 հաշվեհամարին վճարել համապատասխանաբար 210600 (երկու հարյուր տաս հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, 4360 (չորս հազար երեք հարյուր վաթսուն) ՀՀ դրամ և 2600 (երկու հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:
3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2018 թ. սեպտեմբերի 14
գ.Պտղնի